

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԱՄՈՒԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ*

ԿԱՀԻՐԵ

Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա-ը ստացած է Ձեր 31 հոկտեմբեր և 17 նոյեմբեր 1966 թվակիր նամակները, որով Ձերդ Սրբազնությունը կհրավիրե Հայ Եկեղեցին մասնակցելու արևելյան եկեղեցիներու ներկայացուցիչներու հանդիպումին, որ տեղի պիտի ունենա Անթիլիասի մեջ 29 հունվար—10 փետրվար 1967-ին:

Նորին Սրբությունը զգացված է Ձեր եղբայրական բարի մտածումներու համար Հայ Եկեղեցվո և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ, և այսու կհղե Ձեզ մեր միջոցավ Իր հայրական օրհնությունը: Ամենայն Հայոց Հայրապետը բարձր կգնահատե այն եկեղեցաշեն շարժումը, որ սկիզբ առավ հավատքի պաշտպան Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե կայսեր նախաձեռնությամբ և օգնությամբ, որուն նպատակն է՝ ամրապնդել կատարյալ միությունը արևելյան ոչ քաղկեդոնական եկեղեցիներու միջև:

Նորին Սրբություն Վազգեն Ա Կաթողիկոսը իրապես կգնահատե Ադիս-Աբեբայի 1965 թվականի արևելյան եկեղեցիներու պետերու հանդիպումով սկիզբ առած շարժումը, խորապես ցավելով անշուշտ, թե Ինքը՝ Նորին Սրբությունը, իբրև Հայ Եկեղեցվո գերագույն պետ, պաշտոնապես չկարողացավ մասնակցիլ այդ ժողովին Ձեզի ծանոթ պատճառներով:

Նորին Սրբությունը 1964-ին և 1965-ին, Ադիս-Աբեբայի ժողովեն առաջ և հետո, բազմաթիվ անգամներ հատուկ գրություններով բացատրած է հանգամանորեն և ներկայացուցած հստակ կերպով պայմանները, որով կրնա մասնակցիլ Հայ Եկեղեցին արևելյան եկեղեցիներու շարժումին: Այդ նպատակով գրված Վազգեն Ա Կաթողիկոսի վերջին նամակը, 24 դեկտեմբեր 1965-ին, ուղարկվեց Ադիս-Աբեբա և այդ ճանապարհով նաև մեր մյուս քույր եկեղեցիներուն:

---

* Սույն նամակը ուղղված է ղպտի քույր եկեղեցու ներկայացուցիչ գեր. Տ. Սամվել եպիսկոպոսին, որը նախագահն է՝ արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների՝ Ադիս-Աբեբայի ժողովում ընտրված միջեկեղեցական մնայուն հանձնաժողովի:

Մենք լիազորված ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմե հայտնել Ձեզի, թե ներկա պայմաններու մեջ Հայ Եկեղեցին չի կրնար մասնակցիլ Անթիլիասի մեջ Ձեր կոմիտեի կազմակերպած միջեկեղեցական հանդիպումին: Պարզ է անշուշտ, թե Կիլիկյան Աթոռի մասնակցությունը այդ հանդիպումին իրապես և գործնապես չի նշանակեր Հայ Եկեղեցվո մասնակցությունը:

Մենք կմնանք աղոթող, որ Տերը Իր հովանին տարածյալ պահե մեր եկեղեցիներու և մեր հավատացյալ ժողովուրդներու վրա և լուսավորե մեր աշխատանքի ճանապարհը:

Հաճեցեք ընդունիլ մեր եղբայրական սիրո ջերմագին բարեմաղթությունները Ձեր սուրբ գործոց հաջողության համար:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Ատենապետ Գերագույն Հոգևոր Խորհրդի

14 դեկտեմբերի 1966 թ.
Մայր Աթոռ

(Աչքուեստեն նույն հարցի մասին, Մայր Աթոռի դիվանի կողմից, հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը տրվեց նվիրապետական Աթոռներին, թեմերին և հայ մամուլին):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի անունից Ս. Էջմիածնի Մայր Աթոռիս դիվանը լիազորված է հայտարարելու, թե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին չի մասնակցում արևելյան ուղղափառ քույր եկեղեցիների մշտական կոմիտեի կողմից հրավիրված հանդիպումին, որ տեղի է ունենալու Անթիլիասի մեջ՝ 1967 թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 10-ը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

17 դեկտեմբերի 1966 թ.